



Կայտեաները մօտաորապէս 30 հազար հոգի են: Անոնք Բամերունի հիւսիսը կ'ապրին, Ատամաուայի անտառներուն մէջ: Ձմրան վերջաւորութեան, Փետրուարին, անոնք մեղր հաւաքելու կ'երթան անտառին մէջ: Մեղրի այս որսորդները բարձրութիւններէն չեն վախնար, ո՛չ ալ՝ մեղուներուն խայթոցներէն: Անոնք իրենց ցեղախումբի գաղտնիքները կը գործածեն:

Որսորդները նախ իրենց հունձքը կատարելու կը պատրաստուին: Անոնք զգուշութեամբ կը հազնին իրենց յարդէ շինուած գրահները: Չոր խոտի բազմաթիւ խաւերը զանոնք կը պաշտպանեն մեղուներուն խայթոցներէն: Սակայն ազատ շարժելու համար անոնք իրենց ձեռքերն ու ոտքերը չեն ծածկեր:

Յարդէ գրահով պաշտպանուած որսորդներէն մէկը դանդաղօրէն կը բարձրանայ դէպի մեղուներուն փեթակը: Ան անտառի փայտերով պատրաստուած 15 մէթր բարձրութեամբ աստիճան մը կ'օգտագործէ:

Ապա այդ բարձրութեան վրայ հաստատուած փայտէ պզտիկ պատշգամին վրայ կը տեղաւորուի: Ան փեթակին մէջ կը զետեղէ «կպիի-պեթանա» կոչուած բոյսի մը ճգմուած տերեւները, որուն հոտը մեղուները կը քնացնէ:

Երբ մեղուները քնանան, որսորդը իր մերկ ձեռքը փեթակին մէջ կը մտցնէ: Ան միայն 20 վայրկեան ունի մեղրը հաւաքելու համար: Սակայն, հակառակ որսորդներուն զգուշութեան, անոնք յաճախ կը խայթուին չթմրած եւ զայրացած մեղուներուն կողմէ:


Իւրաքանչիւր վայրի փեթակ 25 լիթր հեղուկ մեղր կրնայ պարունակել: Մեղուներուն մեղրով կայտեաները կը պատրաստեն նաեւ համեղ ըմպելիք մը, որ զայն կը խմեն բարեկամներուն հետ:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՏՅԱՆ-ՇԱՀԻՆԵՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՌԱՅՅԻ ԲԵՇԻՇԵՆ



Կրկան լուծել:



| | | | | |
|--|---|--|---|----------------------|
| | - | | = | <input type="text"/> |
| | + | | = | <input type="text"/> |
| | - | | = | <input type="text"/> |
| | - | | = | <input type="text"/> |
| | + | | = | <input type="text"/> |

Պատասխանները հեղուկ՝ 2, 5, 1, 1, 1, 10

Թիւերը
ամբողջացուր պատկերը, ապա՝
գունաւորէ՝
նախասիրած
գոյներով:



Իրաքանչիւր կերպարն քանի՞ հատ
կը տեսնես: Թուէ՛, ապա արձանագրէ՛:

Ժամացոյցը ի՞նչ կ'ընէ: Ժամերուն հետեւելով
գծէ՛ համապատասխան սլաքները:

| | | | |
|-------|-------|-------|-------|
| 12.00 | 13.30 | 02.15 | 15.30 |
| 20.15 | 09.45 | 10.45 | 23.15 |
| 23.00 | 14.45 | 21.15 | 04.45 |

| | | | | | |
|--|--|--|--|--|--|
| | | | | | |
| | | | | | |



| | | | | | | | | | |
|--|----------------------|--|----------------------|--|----------------------|--|----------------------|--|----------------------|
| | <input type="text"/> | | <input type="text"/> | | <input type="text"/> | | <input type="text"/> | | <input type="text"/> |
| | <input type="text"/> | | <input type="text"/> | | <input type="text"/> | | <input type="text"/> | | <input type="text"/> |

ՊԱՐՏԻՉՊԱՆՆ ՈՒ ՄԱՅՐ ԹՈՉՈՒՆԸ

Պարտիզպան մը գետակին ափին կը քալէ: Գետակը լեռներէն կ'իջնէ ու կը հոսի անտառին խոր ձորին մէջ:

Պարտիզպանը յանկարծ կանգ կ'առնէ: Գետինը ծառերուն փտած արմատներուն մէջ, չոր խոտերով շինուած բոյն մը կը տեսնէ, մէջը՝ թռչուն մը: Անոր կտուցը շատ բարակ է երկար է: Անիկա խատուտիկ, դեղին ու մուգ շերտերով տերեւներու նման է: Պարտիզպանն ու թռչունը լուռ կը նային իրարու: Թռչունը ոչ միայն չի շարժիր, այլեւ աչքերն անգամ չի թարթեր, որպէսզի իր տեղը չմատնէ:

Պարտիզպանը ինքն իրեն կը մտածէ. «Փորձեմ այդ փոքրիկ մօր սիրտը» ու բոյնին առջեւ կը կանգնի: Թռչունը փախելու փորձ մ'անգամ չընէր, կ'երեւի չուզեր փոքրիկ ձագերը անպաշտպան ձգել:

Պարտիզպանը կը ծռի եւ զգուշութեամբ բոյնին մէջէն կը վերցնէ մայրը:

Ան փախչիլ անգամ չի փորձեր եւ հնազանդութեամբ պարտիզպանին ձեռքէն կախուած կը մնայ:

Պարտիզպանը կը հասկնայ, որ ան կը մտահոգուի իր ապագայ ձագերով: Ան մեծ զգուշութեամբ թռչունը կրկին իր տեղը կը դնէ: Ան գիտէ, որ թռչունը այլեւս նոյն տեղը պիտի չպահէ իր բոյնը. անգամ մը որ ան մարդոց յայտնի եղած է, անպայման պիտի տեղափոխէ զայն: Ան իր ձագերը թաթերուն մէջ առած պիտի թռչի ուրիշ տեղ, եւ հոն անոնց համար նոր բոյն մը պիտի շինէ:

- Որքա՛ն քաջասիրտ է այս փոքրիկ մայրը,- կը մտածէ պարտիզպանը եւ գետակին ափով կը շարունակէ քալել:



ԱՆՅԱԻԱՏԱԼԻ, ԲԱՅՑ ԻՐԱՒ...



* Թայլանտի մեջ կարգ մը փիղեր պասքեթպոլ խաղալ կը սիրեն:

* Սան Տիեկո կենդանաբանական պարտեզին մեջ բեւեռային արջ մը կրնայ ջուրին տակ պասքեթպոլի թրիպլըներ կատարել:

* Վազոդ Ֆոժա Սինկ մարաթոնի կը մասնակցի, 101 տարեկանին:

* Աշխարհի ամենէն արագավագ մարդը՝ Իւսէին Պոլթ, Փեքինի Ողիմպիական խաղերուն կ'արժանանայ երեք ոսկի մետալներու:

* Աչքերուն մկանները ամենէն շատ գործող մկաններն են: Անոնք օրական աւելի քան 100 հազար անգամ կը շարժին:

* Երկրագունդին 360 միլիոն քառակուսի քմ.-ը ջուրով ծածկուած է:

* Աւստրալիոյ մեջ Յունուար եւ Փետրուար ամիսները տարուան ամենէն տաք ամիսներն են, մինչ Յունիսն ու Յուլիսը՝ ամենէն ցուրտը: